

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/9**

ք. Երևան

19.09.2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «<ԷՌԲԱ>> ԱԿ-ն (Գործընկեր-1), ի դեմս նախագահ Ա. Մարգարյանի, «<ԷԿՈ ՍԻԹԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն (Գործընկեր-2), ի դեմս տնօրեն Գ. Կյուրեղյանի և «<ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ>> ՍՊԸ-ն (Գործընկեր-3), ի դեմս տնօրեն Ա. Բաղդասարյանի (այսուհետ երեքը միասին՝ Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 10.09.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, երեքը միասին (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի Բագրատաշեն բնակավայրում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մուր-մանկապարտեզի կառուցման մնացորդային աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը (Հավելված N 1.2):

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին և տեխնիկական բնութագրին համապատասխան (Հավելված N 1 և Հավելված N 1.1):

1.3 Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների կատարման սկիզբ է համարվում Պատվիրատուի կողմից աշխատանքները սկսելու վերաբերյալ ծանուցման մեջ նշված օրը և աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծով նախատեսված 120 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված N 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը,

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

#### **3.4.3 Ապահովել՝**

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջրուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը,

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և՝ երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ հավելված N 2-ով սահմանված պայմանագրի կատարման փուլերը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2):

3.4.10 Շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում շինարարական օբյեկտի տարածքը համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանման ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով կառուցվող բոլոր տեսակի շինությունները առնվազն արտաքին բոլոր կողմերից, և այդ տեսախցիկներին հասանելիություն ապահովվի ինչպես պատվիրատուի, այնպես էլ պատվիրատուի նշած օգտատերերի համար: Սույն կետի խախտման դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և

պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## **5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

**5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 284 873 947.62 (երկու հարյուր ութսունչորս միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր քառասունյոթ դրամ վաթսուներկու լումա) ՀՀ դրամ, որից 47 478 991.27 (քառասունյոթ միլիոն չորս հարյուր յոթանասունուրթ հազար ինը հարյուր իննսունմեկ դրամ քսանյոթ լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:**

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 30%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում, հիմք ընդունելով աշխատանքների կատարման տվյալ տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետները և վճարման ժամանակացույցով տվյալ եռամսյակի համար սահմանված գումարը:

Ընդ որում կանխավճար հատկացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է տվյալ շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագրի կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

**6.2.1 Ուշացված օրեր չեն հաշվարկվում պատասխանատու ստորաբաժանման եզրակացության հիման վրա: Պատասխանատու ստորաբաժանումը նման եզրակացություն է ներկայացնում՝ հիմք ընդունելով տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից տվյալ ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվությունում արձանագրված համապատասխան օրերի ընթացքում շինարարական աշխատանքների կատարման անհնարինության վերաբերյալ տեղեկատվությունը:**

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	350 000 ՀՀ դրամ
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	1 000 000 ՀՀ դրամ
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	700 000 ՀՀ դրամ

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

<sup>1</sup> Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում և պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:<sup>2</sup>

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

<sup>2</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համապետ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 6) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.12 Պայմանագրի վավերապայմաններում Կապալառուի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի ապահովման և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը (համաձայնագրերը) կնքում, իսկ ապահովումը ներկայացնում, կամ տուժանքի ձևով ներկայացված ապահովումման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է

համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:  
Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
ք. Երևան, հանրապետության հրապարակ  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ  
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար



Գ. Եղիազարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Պ Ա Լ Ա Ռ ՈՒ՝**

**Գործընկեր-1**

«ԷՌԲԱ» ԱԿ  
ք. Դիլիջան, Կալինինի փ, 2-րդ նրբ, թիվ 16  
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Դիլիջանի մ/ճ  
Հ/Հ՝ 220403330172000  
ՀՎՀՀ՝ 07902696

Նախագահ՝



Ա. Մարգարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**Գործընկեր-2**

«ԷԿՈ ՍԻԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ  
ք.Երևան, Շենգավիթ թաղամաս,  
Ս. Տարոնցի նրբ, 2.10 բն. 3  
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ  
Հ/Հ 220043331648000  
ՀՎՀՀ 02279611

Տնօրեն՝



Գ. Կյուրեղյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**Գործընկեր-3**

«ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ  
ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա,  
Լենինգրադյան փ. 23/07  
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ  
Հ/Հ 220043332430000  
ՀՎՀՀ 05019792

Տնօրեն՝



Ա. Բաղդասարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԾԱՎԱԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ «ՄՈՂՈՒԱՅԻՆ» ՏՊԻ 144 ՏԵՂ ՀՁՈՐՈՒԹՅԱՄԲ ՍՈՒՐ-ՄԱՆԿԱԳԱՐՏԵՋԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄՆԱՅՈՐԴԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

NN	Աշխատանքների անվանում	Չ/մ	Ծավալ	1 միավ. ընդհ. արժեք /հազ. դր./	Ընդհանուր արժեք /հազ. դր./
1	2	3	4	5	6
	<b>1-1 Շինարարական աշխատանքներ</b>			1.301	
	<b>Պատեր</b>				
1	Սենդվիչ-պանելների յուղազերցում	մ <sup>2</sup>	630	0.794	500.405
2	Սենդվիչ-պանելների նախաներկում	մ <sup>2</sup>	630	0.124	78.124
3	Սենդվիչ-պանելների բարձրորակ ներկում երկու շերտ եւ գեղազիտական նկարազարդում, համաձայն էքստերիերի դիզայնեական նախագծի	մ <sup>2</sup>	630	1.636	1,030.489
	<b>Սիջնորմներ</b>				
4	Մետաղական դռան տեղադրում	մ <sup>2</sup>	1.9	123.965	235.534
	<b>Տանիք</b>				
5	Զրահեռացման խողովակների տեղադրում $\Phi 120$ մմ, $h=3.5$ մ, գործարանային ներկաձածկույթով, անփայլ	կ-տ	14	35.659	499.229
6	Լուսամուտների յուղաներկում	մ <sup>2</sup>	2.24	3.164	7.087
7	Տանիքի պատուհանների պատրաստում ներառյալ շերտափեղկերը 750x850մմ չափերի	հատ	5	78.197	390.984
8	Քիվի կախվածքի տակի երեսապատում ծեփվոր քիթեղից սալերով	մ <sup>2</sup>	123.9	7.692	953.007
9	Չնարգելիչների տեղադրում	զմ	38	4.423	168.071
	<b>Ներքին հարդարում</b>				
10	Պատերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով բարելավված որակի	մ <sup>2</sup>	255.6	2.526	645.571
	<b>Արտաքին աստիճաններ</b>				
11	Բազրիքի յուղաներկում 2 շերտ	մ <sup>2</sup>	44	1.725	75.895
	<b>Տարբեր աշխատանքներ</b>				
12	Հաշմանդամների սանհանգույցի բռնակների տեղադրում	հատ	4	11.044	44.175
13	Հաշմանդամների սանհանգույցի ծառայի բռնակների տեղադրում	հատ	4	15.777	63.107
	<b>Ընդամենը /հազ. դր./</b>				<b>4,691.679</b>
	<b>1-2 Ջեռուցում</b>				
1	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում $B7.5$ դասի բետոնից, ընդգետնյա առվակի տակ	մ <sup>3</sup>	24.85	44.941	1,116.792
2	Ընդգետնյա առվակի իրականացում ե/բ հավաքովի վաբերից /ԼՅԿ-8-1, Լ4Դ-8/	մ <sup>3</sup>	29.9	207.998	6,219.151
3	Ընդգետնյա առվակի ե/բ միաձուլվ հիմքի պատրաստում $B12.5$ դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.9	48.373	43.536
4	Ամրանային ցանց $Bp 100 \times 100 \times 3$ մմ	տ	0.015	662.626	9.939
5	Ընդգետնյա առվակի ե/բ միաձուլվ պատերի պատրաստում $B12.5$ դասի բետոնից	մ <sup>3</sup>	2.03	56.654	115.008
6	Ամրանային ցանց $Bp 100 \times 100 \times 3$ մմ	տ	0.033	662.626	21.867
7	Ե/բ հավաքովի ծածկի սալերի տեղադրում վաբերի վրա $P5a-8$ , $L=0.74$ մ, այդ թվում 5 հատ շարժական	հատ	318	16.664	5,299.017
8	Ե/բ հավաքովի ծածկի սալերի տեղադրում վաբերի վրա $P5a-8$ , $L=0.28-0.68$ մ	հատ	22	5.506	121.142
9	Առվակի ցանցավոր մետաղական կախարչների տեղադրում /60x78սմ/, 2 հատ	տ	0.016	950.137	15.202
10	Առվակի ծածկի սալերի տակ անկյունակների տեղադրում $L63 \times 63 \times 5$ մմ, $L=22$ մ	տ	0.106	645.643	68.438
11	Խողովակների տակ հենարանային բարձիկների տեղադրում /ՕՈՒ-1/	հատ	1000	0.820	820.394
12	Ենդգետնյա կոնվեկտորի ե/բ փոտրակի իրականացում $1.75 \times 0.3 \times 0.25$ (Կ)մ, $B12.5$ դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.42	73.509	30.874
13	Ամրանային ցանց $Bp 100 \times 100 \times 3$ մմ	տ	0.007	662.626	4.638
14	Փոտրակի եզրի մետաղական անկյունակների տեղադրում անկյունակների տեղադրում $L36 \times 36 \times 3$ մմ	տ	0.015	125.531	1.883
15	Առվակի մետաղական մասերի ներկում հակակոռոզիոն ներկով 2 շերտ	տ	0.13	33.143	4.309
16	Առվակի արտաքին մակերեսի մեկուսացում բիտումով /աշխատավարձը հաշի է առնված վաբերի տեղադրումում/	մ <sup>2</sup>	500	0.625	312.381
17	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից $\Phi 32/40 \times 3.7$ մմ, $PN10$ , հիդրավիկ փոռնարկումով	զմ	115	4.179	480.575
18	Ջեռուցման այլումինե մարտկոցների տեղադրում	էքմ	3	1.023	3.070
19	Ջեռուցման այլումինե մարտկոցների արժեքը $H=500$ մմ, $W=97$ վտ /Եւրոպական/	սեկ-գիա	11	6.311	69.418
20	Ջերմակարգավորիչ փականներ $\Phi 15$ մմ	հատ	5	5.986	29.931
21	Կցողչալին փականներ $\Phi 15$ մմ	հատ	8	5.559	44.469
22	Ավտոմատ օդահեռացման փականներ $\Phi 15$ մմ	հատ	89	2.794	248.677
23	Փայլաքիթերի տեղադրում մարտկոցներ ետևում, պատերի վրա	մ <sup>2</sup>	37	1.553	57.473
	<b>Ընդամենը /հազ. դր./</b>				<b>15,138.185</b>
	<b>1-3 Օդափոխություն</b>				
	<b>ա - ԱԳ-1; 3; 5</b>				
1	Հակահրդեհային կրակապաշտպան կափուր $BEHTC \text{ ПЛ-10-1A ДН160, D=172, L=170}$ մմ, $G=1.6$ կգ	հատ	3	46.179	138.537
2	Ձուխի ՓԵ տիպի $\Phi 5160 \text{ 220} \times 202$ մմ, $L=106$ մմ, $G=1.26$ կգ	հատ	3	35.638	106.914
3	Սահափակիչ $A3D-160M-PP$ , ռետինից կիպարտով $L=170$ մմ	հատ	3	17.465	52.394
4	Օդատարների մեկուսացում քիթեղապատ համբարամբակով $d=50$ մմ	մ <sup>3</sup>	1.1	42.829	47.112
5	Մետաղական թասակ զինկապատ քիթեղից $300$ մմ, $d=0.55$ մմ, $G=0.93$ կգ	հատ	3	2.430	7.289
	<b>բ - ԱԳ-2; 4; 6</b>				
6	Հակահրդեհային կրակապաշտպան կափուր $BEHTC \text{ ПЛ-10-1A ДН160, D=172, L=170}$ մմ, $G=1.6$ կգ	հատ	3	46.179	138.537
7	Ձուխի ՓԵ տիպի $\Phi 5160 \text{ 220} \times 202$ մմ, $L=206$ մմ, $G=1.26$ կգ	հատ	3	35.638	106.914
8	Սահափակիչ $A3D-160M-PP$ , ռետինից կիպարտով $L=170$ մմ	հատ	3	17.465	52.394

9	Օդատարների մեկուսացում քիթեղապատ հանքաքամքակով d=50մմ	մ <sup>3</sup>	1.1	42.829	47.112
10	Մետաղական թասակ զինկապատ քիթեղից 300մմ, d=0.55մմ, G=0.93կգ	հատ	3	2.430	7.289
<b>գ - ԱԳ-7</b>					
11	Հակահրդեհային կրակապաշտպան կափույր ВЕНТС ПЛ-10-1А ДН200, D=212, L=170մմ, G=2կգ	հատ	1	52.299	52.299
12	Ձևիչ ՓԵ տիպի ՓԵ200 244x245մմ, L=206մմ, G=1.55կգ	հատ	1	20.808	20.808
13	Սահափակիչ А3Д-200М-РП, ռետինից կիպարաղով L=170մմ	հատ	1	22.829	22.829
14	Օդատարների մեկուսացում քիթեղապատ հանքաքամքակով d=50մմ	մ <sup>3</sup>	0.35	42.829	14.990
15	Մետաղական թասակ զինկապատ քիթեղից 350մմ, d=0.55մմ, G=1.25կգ	հատ	1	2.524	2.524
<b>դ - ԱԳ-8</b>					
16	Հակահրդեհային կրակապաշտպան կափույր ВЕНТС ПЛ-10-1А ДН160, D=172, L=170մմ, G=1.6կգ	հատ	1	46.179	46.179
17	Ձևիչ ՓԵ տիպի ՓԵ160 220x202մմ, L=106մմ, G=1.26կգ	հատ	1	35.638	35.638
18	Սահափակիչ А3Д-160М-РП, ռետինից կիպարաղով L=170մմ	հատ	1	17.465	17.465
19	Օդատարների մեկուսացում քիթեղապատ հանքաքամքակով d=50մմ	մ <sup>3</sup>	0.18	42.829	7.709
20	Մետաղական թասակ զինկապատ քիթեղից 300մմ, d=0.55մմ, G=0.93կգ	հատ	1	2.430	2.430
<b>ե - ԱԳ-9</b>					
21	Հակահրդեհային կրակապաշտպան կափույր ВЕНТС ПЛ-10-1А ДН250, D=249, L=190մմ, G=2.5կգ	հատ	1	60.459	60.459
22	Աղմկախլացուցիչ ВЕНТС СР 250/600 L=600մմ, D=322մմ, G=5.6կգ	հատ	1	17.465	17.465
23	Ձևիչ ՓԵ տիպի ՓԵ250 294x295մմ, L=206մմ, G=2.2կգ	հատ	1	20.808	20.808
24	Սահափակիչ А3Д-250М-РП, ռետինից կիպարաղով L=200մմ	հատ	1	30.717	30.717
25	Չճանգոտվող մետաղից տեխնոլոգիական թասակ յուղահավաք գոլիչով 2.8x1x0.6 մ չափերով b=0.8մմ	հատ	1	66.263	66.263
26	Օդատարների մեկուսացում քիթեղապատ հանքաքամքակով d=50մմ	մ <sup>3</sup>	0.31	42.829	13.277
27	Մետաղական թասակ զինկապատ քիթեղից 450մմ, d=0.55մմ, G=1.9կգ	հատ	1	4.654	4.654
<b>զ - ԱԳ-10</b>					
28	Հակահրդեհային կրակապաշտպան կափույր ВЕНТС ПЛ-10-1А ДН200, D=212, L=170մմ, G=2կգ	հատ	1	52.299	52.299
29	Աղմկախլացուցիչ ВЕНТС СР 200/600 L=600մմ, D=318մմ, G=4.6կգ	հատ	1	17.465	17.465
30	Ձևիչ ՓԵ տիպի ՓԵ200 244x245մմ, L=206մմ, G=1.55կգ	հատ	1	30.905	30.905
31	Սահափակիչ А3Д-200М-РП, ռետինից կիպարաղով L=170մմ	հատ	1	22.829	22.829
32	Օդատարների մեկուսացում քիթեղապատ հանքաքամքակով d=50մմ	մ <sup>3</sup>	0.29	42.829	12.420
33	Մետաղական թասակ զինկապատ քիթեղից 350մմ, d=0.55մմ, G=1.25կգ	հատ	1	4.607	4.607
<b>է - ԱԳ-11</b>					
34	Հակահրդեհային կրակապաշտպան կափույր ВЕНТС ПЛ-10-1А ДН160, D=172, L=170մմ, G=1.6կգ	հատ	1	46.179	46.179
35	Ձևիչ ՓԵ տիպի ՓԵ160 220x202մմ, L=106մմ, G=1.26կգ	հատ	1	35.638	35.638
36	Սահափակիչ А3Д-160М-РП, ռետինից կիպարաղով L=170մմ	հատ	1	17.465	17.465
37	Օդատարների ճկուն միջուկներ Փ160/330մմ	հատ	0.8	12.306	9.845
38	Օդատարների ամրացման մետաղական սարքեր	կգ	5	0.873	4.366
39	Օդատարների մեկուսացում քիթեղապատ հանքաքամքակով d=50մմ	մ <sup>3</sup>	0.11	42.829	4.711
40	Մետաղական թասակ զինկապատ քիթեղից 300մմ, d=0.55մմ, G=0.93կգ	հատ	1	2.430	2.430
<b>ը - ԱԳ-12</b>					
41	Հակահրդեհային կրակապաշտպան կափույր ВЕНТС ПЛ-10-1А ДН200, D=212, L=170մմ, G=2կգ	հատ	1	52.299	52.299
42	Աղմկախլացուցիչ ВЕНТС СР 200/600 L=600մմ, D=315մմ, G=4.6կգ	հատ	1	17.465	17.465
43	Ձևիչ ՓԵ տիպի ՓԵ200 244x245մմ, L=206մմ, G=1.55կգ	հատ	1	30.905	30.905
44	Սահափակիչ А3Д-200М-РП, ռետինից կիպարաղով L=170մմ	հատ	1	22.829	22.829
45	Օդատարների մեկուսացում քիթեղապատ հանքաքամքակով d=50մմ	մ <sup>3</sup>	0.47	42.829	20.130
46	Մետաղական թասակ զինկապատ քիթեղից 350մմ, d=0.55մմ, G=1.25կգ	հատ	1	3.029	3.029
<b>թ - ԱԳ-13</b>					
47	Օդատարների մեկուսացում քիթեղապատ հանքաքամքակով d=50մմ	մ <sup>3</sup>	0.09	42.829	3.855
48	Մետաղական թասակ զինկապատ քիթեղից 300մմ, d=0.55մմ, G=0.93կգ	հատ	1	2.430	2.430
<b>ժ-ՆԳ-1, ՆԱ-1-Յ4</b>					
49	Օդի ներածող-արտածող ռեկուպիրացիոն սարքավորում ИНСОЛАР КРВС-125	կ-տ	40	154.542	6.181.685
50	Օդի ներածող-արտածող ռեկուպիրացիոն սարքավորում ВЕНТС ВТУ 900 П8Э ЕС	կ-տ	1	925.662	925.662
51	Սահափակիչ А3Д-250М-РП, ռետինից կիպարաղով L=200մմ	հատ	2	14.625	29.250
52	Օդատարի անցկացում զինկապատ պողպատից ուղղանկյուն կտրվածքով d=0.5մմ, 400x250մմ	մ <sup>2</sup>	9.4	10.000	94.000
53	Պլաստմասից զանգարաններ պատի մեք ՔՅԸ 200x150մմ	հատ	24	4.740	113.751
54	Օդատարների մեկուսացում քիթեղապատ հանքաքամքակով d=50մմ	մ <sup>3</sup>	1.8	42.829	77.092
55	Մետաղական թասակ զինկապատ քիթեղից 450մմ, d=0.55մմ, G=1.9կգ	հատ	1	4.654	4.654
					<b>8,981.196</b>
<b>Ընդամենը /հազ. դր./</b>					
<b>1-4 Ներքին ստոր ջրամատակարարման գանգ</b>					
1	խողովակաշարի անցկացում պողպատե զինկապատ խողովակներից Փ57x3.5մմ	զմ	84	3.809	319.915
2	Պողպատե խողովակների ձեւավոր մասերի տեղադրում	կգ	20	2.495	49.894
3	կրակմարիչ փոփոխային ՕՈՂ-9	հատ	2	11.359	22.719
4	Ծրակ-խառնիչների տեղադրում, գնցողով /ոչ ստացիոնար տեղակայված/	հատ	2	60.812	121.623
5	Պատյամի տեղադրում պողպատե խողովակից Փ219x4մմ	զմ	0.5	15.543	7.772
6	իսցափակում պատյամի եւ խողովակի միջեւ առաձգական նյութով	մ <sup>3</sup>	0.02	223.784	4.476
7	Պատյամների ներկում հակակոռոզիոն ներկով, 2 շերտ	մ <sup>2</sup>	0.35	1.087	0.381
8	Պողպատե խողովակների փորձարկում	զմ	84	0.120	10.116
					<b>536.896</b>
<b>Ընդամենը /հազ. դր./</b>					
<b>1-6 Ներքին կոյուղու գանգ</b>					
1	երկտեղ խոհանոցակոյուղու տեղադրում սիֆոնով /ջճանցուկով/	կ-տ	8	36.916	295.329
2	Տակդիոնների տեղադրում սիֆոնով	հատ	2	28.859	57.717
3	Մետաղական տարրերի երկշերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	2	1.725	3.450
					<b>356.496</b>
<b>Ընդամենը /հազ. դր./</b>					
<b>1-7 էլեկտրաուժային սարքավորումներ</b>					
1	Գլխավոր բաժնիչ վահան ներանցումային 125Ա, խմբային 1x80Ա+2x50Ա+2x25Ա+1x16Ա եռաֆազ + 1x40Ա+1x25Ա միաֆազ ավտոմատ անջատիչներով 800x1700x440մմ, կոնպլեկտավորված չափիչ եւ ստուգիչ սարքավորումներով /ԳԲՎ/	կ-տ	1	155.210	155.210
2	Մետաղական բարակապատ զինկապատ խողովակ Փ40մմ	զմ	22	3.102	68.237
					<b>223.448</b>
<b>Ընդամենը /հազ. դր./</b>					
<b>1-8 էլեկտրալուսավորություն</b>					
1	Լուսադիոդային լուսատու 18Վտ, առատադային, ձեւ ուղղանկյուն (595x295x50մմ) լուսային հոսքը 2100Լմ արդյունավետությունը 116Լմ/Վտ լույսի ջերմաստիճանը 4100K լուսահաղորդման ինդեքսը 80	հատ	8	21.650	173.197
2	Լուսադիոդային լուսատու 27Վտ, IP54, ձեւ կլոր (Փ210մմ) լուսային հոսքը 2831Լմ լուսային արդյունավետությունը 105Լմ/Վտ լույսի ջերմաստիճանը 4100K լուսահաղորդման ինդեքսը 80	հատ	14	26.383	369.357

3	Լուսադիոդային լուսատու 18վտ, ձևը ուղղանկյուն (328x51) ներսարքված մարտկոցով	հատ	18	28.308	509.535
4	Ելքի LED ճշան «Exi» 3վտ	հատ	3	10.953	32.859
5	Պոլիմիդիլթրոբի այրմանը չնպաստող էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ $\Phi$ 20մմ	զմ	100	0.547	54.664
<b>Ընդամենը /հազ. դր./</b>					<b>1,139.612</b>
<b>1-12 Չագանատակարարում</b>					
1	Գազի հաշվիչների տեղադրում G-6, մետաղական արկղով, էլեկտրոնային ճշտիչով	հատ	1	116.445	116.445
2	Կցողոչային փական $\Phi$ 25մմ	հատ	2	6.217	12.433
3	Կցողոչային փական $\Phi$ 32մմ	հատ	1	11.324	11.324
4	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրառեռակցված խողովակներից $\Phi$ 25x2մմ	զմ	5	2.073	10.365
5	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրառեռակցված խողովակներից $\Phi$ 32x2մմ	զմ	7	2.215	15.505
6	Չագանազդանշանային սարքի տեղադրում «Ղեկավար»	հատ	1	30.341	30.341
7	Գազի անջատիչ կախույր	հատ	1	15.265	15.265
8	Չագանատարի միացում գործող գանգին $\Phi$ 32մմ	տեղ	1	31.456	31.456
9	Համակարգի պնեմատիկ փորձարկում	զմ	17	0.789	13.413
10	Համակարգի փչամաքում օդով	զմ	12	0.153	1.830
11	Պողպատե խողովակների յուղաներկում 2 շերտ	մ <sup>2</sup>	1	3.012	3.012
12	Ճկուն խողովակ կաթսաների միացման համար	զմ	3	4.733	14.199
13	Անցքերի բացում պատի մեջ ծխնելույցի տեղադրման համար	հատ	2	5.052	10.104
14	Անցքի բացում պատի մեջ պարունճի տեղադրման համար	հատ	1	5.052	5.052
15	Անցքերի լցափակում	հատ	3	1.346	4.037
16	Մետաղական պարկուճի տեղադրում $\Phi$ 100մմ, L=0.7մ, 1 հատ	զմ	0.7	10.090	7.063
17	Պարկուճի եզրերի փակում ճկուն նյութով	մ <sup>3</sup>	0.003	223.826	0.671
18	Մետաղական կալոնակներ խողովակների տակ	կգ	7	0.873	6.112
19	Վարդակների տեղադրում կաթսաների համար	հատ	2	1.052	2.103
20	Պղնձե հաղորդալար 2x1.5մմ <sup>2</sup>	զմ	15	0.665	9.976
<b>Ընդամենը /հազ. դր./</b>					<b>320.708</b>
<b>1-13 Կաթսայատան ջերմատեխնիկական աշխատանքներ</b>					
1	Ջեռուցման կաթսաների տեղադրում 30կՎ TURBO	հատ	2	483.904	967.809
2	Կաթսայի քրի շրջանառու /հակակոնդենսացման/ պոմպերի տեղադրում	հատ	2	216.425	432.850
3	Սենթրալային ընդարձակման բաթ 30լ	հատ	1	47.529	47.529
4	Սատակարարող սանրակ երկտեղանոց $\Phi$ 125մմ, L=0,8մ	հատ	1	73.594	73.594
5	Հետադարձ սանրակ երկտեղանոց $\Phi$ 125մմ, L=0,8մ	հատ	1	73.594	73.594
6	Տաք քրի գտիչ 20մմ	հատ	2	6.039	12.077
7	Սառը քրի գտիչ 15մմ	հատ	2	4.636	9.272
8	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից $\Phi$ 15/20x1.9մմ, հիդրավիկ փորձարկումով, լվացումով եւ ախթահանումով	զմ	6	2.525	15.153
9	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից $\Phi$ 20/25x2.3մմ, հիդրավիկ փորձարկումով, լվացումով եւ ախթահանումով	զմ	16	2.225	35.598
10	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից $\Phi$ 25/32x3մմ, հիդրավիկ փորձարկումով, լվացումով եւ ախթահանումով	զմ	14	2.636	36.904
11	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից $\Phi$ 40/50x5.4մմ, հիդրավիկ փորձարկումով, լվացումով եւ ախթահանումով	զմ	16	5.355	85.683
12	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից $\Phi$ 50/63x5.8մմ, հիդրավիկ փորձարկումով, լվացումով եւ ախթահանումով	զմ	22	7.798	171.560
13	Կցողոչային փականներ $\Phi$ 40մմ	հատ	2	13.296	26.591
14	Կցողոչային փականներ $\Phi$ 50մմ	հատ	4	19.868	79.473
15	Հետադարձ կախույր $\Phi$ 50մմ	հատ	2	10.934	21.868
16	Ուղղահայաց ջերմաչափ	հատ	2	5.490	10.981
17	Տեխնիկական մանոմետր	հատ	2	6.635	13.271
18	Ջերմակարգավորիչ փականներ $\Phi$ 40մմ	հատ	1	13.296	13.296
